Գործ թիվ ԵԴ/10004/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

12 մայիսի 2023թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ **Տ. Գրիգորյանի**

Քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ՍԻԳՄԱ14>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) (գրանցման համար 264.110.1270468, ՀՎՀՀ 01046178, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ֆրունզե 13 շենք, 2-րդ հարկ) ընդդեմ <<Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան>> հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատասխանող) (հասցե՝ ք. Երևան, Կորյուն 2), ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ <<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի՝ թիվ <<ԷԱՃԱՊՁԲ-2023/8-1ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1.1-րդ կետի եզրափակիչ մասնով կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր <<ՍԻԳՄԱ14>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ն.Մեհրաբյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ <<Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան>> հիմնադրամի՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի թիվ ԷԱՃԱՊՁԲ-2023/8-1-ԵՊԲՀ ծածկագրով մրցույթի թիվ 2 և թիվ 3 արձանագրությունների այն կետերը, որոնցով ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, ինչպես նաև այն կետը, որով չկայացված է ճանաչվել գնման ընթացակարգը անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 27.03.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվոր <<ՍԻԳՄԱ14>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ն.Մեհրաբյանը կրկին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ <<Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան>> հիմնադրամի, երրորդ անձ՝ <<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի՝ թիվ <<ԷԱՃԱՊՁԲ-2023/8-1ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1.1-րդ կետի եզրափակիչ մասնով կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Վերը նշվածի արդյունքում, Դատարանը գտնում է, որ ընթացակարգը գնահատող հանձնաժողովի գործողությունները եղել են իրավաչափ, ուստի հայցը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Դատարանը, անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ հայցադիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<ՍԻԳՄԱ14>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան>> հիմնադրամի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ <<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի՝ թիվ <<ԷԱՃԱՊՁԲ-2023/8-1ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1.1-րդ կետի եզրափակիչ մասով կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ